

Հարցաշար

հայոց լեզվի օլիմպիադայի մարզային փուլի

12-րդ դասարան

Տևողությունը 150 րոպե

Դարերի վաղնջական հոլովության միջից ահա դեպի մեզ է գալիս տոկուն ու առնական մի ճամփորդ՝ երկնքի լաջվարդը աչքերում, հայացքը դեպի բիրվիական հրաշափառ լեռը:

- Ո՞վ ես դու, ճամփորդ, ի՞նչ է անունդ:

- Բայց մի՞թե մի անուն ունեմ ես և կարո՞ղ էի մի անուն ունենալ, երբ ապրել եմ բոլոր դարերում, երբ եղել եմ աշխարհի բոլոր ծայրերում:

Վայելչատես Արան եմ ես՝ խորհրդանիշը անընդհատ մեռնող, բայց հարություն առնող իմ ազգի:

Երեսունվեց հրաշագործ ու մոգական զինվորներով մի ողջ ժողովուրդ փրկած այրն եմ ես՝ Մեսրոպ անունով:

Մասունցի ծուռ Դավիթն եմ՝ իջած հեքիաթից, բայց ավելի իրական, քան հայոց պատմության ամենից իրական հերոսները: Ինձ է ապավինել ժողովուրդը, երբ լցվել է նրա համբերության թասը:

Թումանյանն եմ՝ ամենայն հայոց բանաստեղծը՝ Լոռվա բարձրաբերձ լեռների հայրենանվեր գավակը:

Մեծ քաղաքի, աշնան ու տրտմության երգիչն եմ՝ Տերյանը, ում կյանքի ու երգի ուղին աշնան տերևաթափ ծառուղու էր նման:

Չարենցն եմ՝ նորօրյա մրրկաշունչ Նարեկացին:

Աբու-Լալայի քարավանով հայրենիքից հեռացած Իսահակյանն եմ, ով երկար դեգերումներից հետո հանգիստ առավ հայրենի հողում:

Ինձ Մարտիրոս Սարյան են կոչում: Միջնադարյան ծաղկողների հավաքած որդան կարմիրը, արևի ոսկին ու երկնքի կապույտն ինձ հասան, որ հայոց ներկապնակը ողողվի բոսորավառ արևով ու լույսով:

1. Ավարտի՛ր բնագիրը 2-3 նախադասությամբ՝ պահպանելով տեքստի ոճական շարադրանքը: Տեքստի համար վերնագիր ընտրի՛ր: (1,5 միավոր)
2. Տեքստից դուրս գրի՛ր փոխաբերական իմաստ արտահայտող երկու նախադասություն: (0,5 միավոր)
3. Գրի՛ր տրված բայերից յուրաքանչյուրի եղանակն ու ժամանակաձևը՝ *գալիս է, ունեմ, եղել է, հասան, ողողվի*: (1 միավոր)
4. Փոխակերպի՛ր տրված բարդ նախադասությունը՝ վերածելով պարզի: *Բայց մի՞թե մի անուն ունեմ ես և կարո՞ղ էի մի անուն ունենալ, երբ ապրել եմ բոլոր դարերում, երբ եղել եմ աշխարհի բոլոր ծայրերում*: Որոշի՛ր երկրորդական նախադասությունների բնույթը: (1 միավոր)
5. Մեկնաբանի՛ր *բաքոսյան խրախճանք, գորդյան հանգույց* թևավոր խոսքերը: (1 միավոր)
6. Գրի՛ր շարադրություն «Երազանքների իմ մոլորակը» վերնագրով: (5 միավոր)